

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
 բարեկան 12 ֆր.
 վեցամսեայ 7
 Արտասահմանի
 համար բարեկան 15 ֆր.
 վեցամսեայ 8
 Անկրիկայի համար
 բարեկան 3 ֆր.
 վեցամսեայ 1.50

Ինքնուրույն տղայ մ
 ոտքին երեսին համար
 40 սանթիմիտ իսկ վերջին
 երեսին համար 20 սան-
 րիմ է: Իրեֆին ու էլի
 սանթիմետրու համար
 20 0/0 զեղը կրլայ:

Վառեցալի համար ձեռ
 ֆ 40 սանթիմիտ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ԵՍԱԼԹ ՕՐԵՐԸ

ОГОВОРИТЕЛЬ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Նամակ եւ դրամ
 դրկի խմբագրութեան
 հասցիին

Редакция на вѣстникъ
 "Шаржумъ"
 Варна

Redaction du journal
 "Charjoum"
 Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար
 ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար
 ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չին
 տրոխ

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԵԳԻՆԸ ՊԷՏԻ Ե ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԻ

ՄԵԾ ԱՌԱՌՕՏԸ

Ռուսական յեղսփոխութիւնը որքո՞րք թաւալով աւելի կատարի ու սպանական երեսնոյթ մը կը ստանայ, սկսած է ամբողջ Եւրոպան վարակել: Ժողովրդային զանգուածները տարիներէ ի վեր իրենց սրտին խորը պահած իդէաքը մէջտեղ հանելու, անոնց իրականացումը պահանջելու ժամակը եկած կը համարեն: Հարիւրէ աւելի տարիներու մէջ մարդկութեան կատարած յառաջդիմութիւնը կեանքի նոր պահանջներ ստեղծած է ու տիրող քաղաքական լէժիմները հետո են զանոնք զոհաբերելու միջոցը հայտնաբերել: Երբեմն ֆրանսական յեղափոխութիւնն էր որ բնագոյնի պահանջներ կու տար քաղաքակիրթ հին աշխարհի բնակիչներուն իրենց սպասուած իրաւունքները բռնապետներէն խլելու համար: Եւրոպայի արքայական զահերը կը սարսառալին անհարկ իրուր միտքային մէջ կատարուող յեղաշրջումներուն, ու ձեռք ձեռքի տուած միտքորհուրդ կը քայլին անոր վրայ, ոչ այնքան զինուորական պահանջներ իրենց յայտարարելու, որքան պատմաբան ժողովրդին քաղաքական ազդու գաս մը տալու համար, որպէսզի իրանդրանիկ քայլերուն մէջ իսկ խեղճեն ճիշդ ազատական նոր ոգին: Բայց իրենց բոլոր ջանքերը ապարդիւն մնացին: Կատարական սկզբունքները փոթորկի պահուն ծագող հրդեհի մը լափիչ արագութեամբ՝ ծաւալեցան Ֆրանսայի սահմաններէն շատ անդին, ու ստիպեցին վերջապէս բոլոր արքայական հպարտ գահերը խոնարհելու: Ժողովրդեան անսասան կամքին առջեւ:

Եւ սակայն կեանքի փորձառութիւնը ցուցուց թէ արեան զնով խլուած այդ կարգ մը ազատութիւնները ժողովրդին բոլոր խաւերուն ալ հաւասարապէս չէին կրնար բաշխել իրենց ա-

ռաւելութիւնները: Հին իշխող դասակարգերուն տեղ նոր կը ստեղծուէր — պուրժուազին — որ իր կարգին՝ նոյնքան բռնաւոր կը գտնար որքան առաջինները և սրուն շահերը միայն հը ծառայէին իբր ուղեգրի միջոցաւ: Երբ ու քաղաքական յարաբերութեանց:

Ռուսախաբութիւնը բնականօրէն խուճ գոհուածութիւն մը ծնաւ որ տակաւ սրտերը հրահրեց յարմար ժամանակին բռնկելու պատրաստ:

Ու այսօր ռուսական յեղափոխութիւնն է որ ազդանշանը կու տայ ընդհանուր ժողովրդական շարժումներու վերանորոգումին: Սպանիայէն սկսեալ, որ կուզէ վերջապէս թօթափել իր միտքային անտանելի լուծը հանրապետական կառավարութիւն մը հաստատելու համար, Աստրիան իր երկիրներէն ազգութեանց բազմազան պահանջներով, Իտալիան իր անհունապէս լճուտա իրաւապաշտներով, Ֆրանսան, Ինքնիւնիան իրենց վաղմի ընկերվարականներով, բոլորն ալ գործի սկսած են, բոլորն ալ զօհաբեր կը պահանջեն, բոլորն ալ արդի կարգերու յեղաշրջում և ապրելակերպի աւելի յարմար պայմաններու հաստատում ձեռք բերել կուզեն:

Անձայր թուլ ամպ մը կը սաւառնի մեր ցամաքին վրայ, որ արդէն ծածկած է լայնածաւալ Ռուսիան: Փոխացման շրջան մըն է որ կը բոլորէ ամբողջ Եւրոպան: Փոխանցման այս շրջաններուն է որ մեծ ու պղտիկ ազգութեանց ճակատագիրը կը սահմանուի: Ընդհանուր հաշուեյարգարութեան միջոցին, որ հին շրջանը կը փակէ ու նորը կը բանայ, արթուն գտնուող փոքրիկ ազգերն ալ ազատութեան սեղանին շուրջը իրենց տեղը կը գրաւեն:

Նոր կեանքի արշալոյսը սկսած է իր ցուրբերը արձակել տառապող մարդկութեան վրայ: Կոտակնուրիք ազգովին՝ կորովի

ու կտրիծօրէն ողջունելու համար պայն: Մեր ճիգերը, թէեւ թոյլ ու յոգնած՝ ի մի հաւաքենք ինչոյդ ձեռքերով: Շոտլանդիան, ուժերու յիմար ու անը պատակ մտնումի ատենը չէ հիմայ: Միթէ ձեռնունայն պլտի ներկայանանք Մեծ Առաւօտը ողջունելու: Հնութեան նեխաքը լափող արեւածագի հանդ հրդեհը բոցավառելու համար չի՞ պիտի կրնանք մեր կայծ ունենալ:

Ազգերու կեանքին մէջ տարիները վայրկեաններէն ալ արագ կը սահին: մեր կեանքը, իր ճղճիմ գոյութեան վաղանցուկ շրջանը բոլորելով՝ կուշնջանայ առ յաւէտ: Ազգերու կեանքը, սակայն, պէտք չէ մերիւնին հետ բազդատել: անիկա աւելի երկար ու տեւական է, ու իր յեղաշրջումները աւելի գանդալ: Մեծ Առաւօտը որուն ակնդէտ կը սպասենք, գուցէ մեր օրով չի ծագիր, բայց հայ ազգը պիտի տեսնէ անոր գալուստը ու եթէ պատրաստ ըլլալ զայն գիմաւորելու, եթէ մինչեւ այն օրը ամուլ զոհուածութիւններով չսպառի ու չի հիւծի, պիտի վայելէ անոր բարիքները:

ՇԱՅԱՄ

Ս Լ Ա Ց Ե Կ Ն Օ Թ Ե Ր

ՀՐԵԱՆԵՐԵՆ ՕՐԻՆԱԿ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Աստուած վկայ մենք կը
 յաղթէինք, թէ մէկ անձ
 նուրաց մարդ ունենայինք:
 ՔԱՄԱՌ-ԳԱՌԻՊԱ.

Այս տարածքներէն հալածական ժողովրդին վատ ու պզգալի դրուագները չէ՞ որ պիտի հրամցենք մեր հասարակութեան, եւ արդէն երկրագնդի վրայ գտնուող ո՞ր մէկ ցեղ զուրկ է ստոր յատկութիւններէ... նամանաւանդ մերը, աւաղ շատ տըխուր է արձանագրելու վար չի մնալով հանգրձ հրէական և ո՞չ մէկ յոթ կողմերէն: Է՛ն ցաւալին այն է որ ու է կէտով պնդու ու օրինակելի ա-

ռաւելութիւն մը շունի անոր վրայ: Ատաճ ու արիւմարած ենք հրեաները, և ատելով կատենք տակաւին: նոյն իսկ մենք, հայերս: Բայց և այնպէս, այդ մարդիկը, արեւելքի պատմութեան դեռ անաջին օրէն տուած են ու կուտան աշխարհին ամեն տեսակի աջքառու անհատներ: Գրիտոսէն մինչեւ Մարքս, նշանաւոր քաղաքագէտներ, ֆինանսիստներ, առաջնորդներ, բարեկարգիչներ, իսկ ընդհանուր կեկողով, իրենց ցեղային ամբողջութեան մէջ, յատկութիւններ, որոնք մեծապէս հրահանգիչ են մեզ, հայերու համար, որ յաճախ յաւակնութիւնն ունինք քամարելու այդ ցեղը:

Ի՞րաւ է որ հրէաներու մէջ ազգայնութեան գաղափար մեռած է, և երկրագնդի իւրաքանչիւր սնկիւնի հրէան կը ներկայանայ իբրեւ անգամ ու քաղաքացի տեղական համայնքին, բայց և այնպէս, երբ կը ներկայանայ առիթը, այդ բոլոր ցիրուցան անհատները, որոնց իսկութեան անձանթ է իր դեռ առջի օր, կը յայտնուին իբր Սրբահամի է՛ն հարազատ որդիները և իրենց օժանդակ ձեռքը կը կարկառեն իրենց աջակցութեան կարօտներուն:

Կէտ մը, զժբախտարար, որ մեծապէս ուշադրութենէ վրիպած է մեր մէջ, այդ ալ այն պատրաստականութիւնն է օգնելու, զոր, հրեայ ամբողջ ցոյց կուտայ իր կրօնակիցներուն և հայրենակիցներուն, թափառական փերեզակէն մինչեւ մեծատուն դրամատէրը:

Մեր հարուստներուն համար, մանաւանդ այս վերջերս, սրբազան պարտականութիւն մըն է դարձած աչք գոցել, սկանջ փակել իրենց եզած աղերսական նայուածքներուն ու աղիողորմ պաղատանաց: Կոտորածներ կը կրկնուին թիւրքիա, կոտորածներ կը կրկնուին, ու բացուած հանգանակութեան տոմարները իրենց շարժմանը շրջաբերութեան վերջ՝ հազիւ հազ կը բերեն մէկ քանի հարիւր բուրիլի կամ ֆրանքի գումար մը... Ինչո՞ւ: Մեր մեծապատիւ աղաները չեն մասնակցիր, որովհետեւ անոնք կը վախնան այդ բարեբար գործին աջակցիլ մի գուցէ իրենց սեփական շահերը վնասուելու երկիւղով և այնպէս, հայ դժբախտը կը մնայ դժբախտ, իր ձայնը կը մնայ անխելի և կը մոռցուի: Այդպէս չէ՞ ու չեղաւ, սակայն, հրէաներուն համար: Երբ առաջին անգամ Օտլաւայի կոտորածներուն լուրը հասաւ Լոնտոն, Լորտ Ռոչիլտ, իր իսկ նախաձեռնու-

տար Ռոչիլտ, իր իսկ նախաձեռնու-

թեամբ, իր սեփական պանթի սրահ ներքին մէկուն մէջ ժողով մը կազմելով՝ բազմազան է՝ նախաձեռնող անձերէ ֆինանսի և քաղաքական աշխարհին մէջ, երեսան բերաւ նպատակաւոր յանձնարարութեամբ, որուն մասնակցեցան ամէն կողմէ :

Կոչը, որ կուզուէր արեւելքի վրայ գտնուող հրեայ հասարակութեան, կը նկարագրէր անոնցի վիճակը Ռուսաստանի հրեաներուն ստորագրութեան գլուխն էր ինքը Ռոչիլտներուն հայրը, և այդ նշանաւոր դրամատէրը, որ անգլիացիք առհասարակ անգլիացիի անդ քչելու ունակութիւնն ունին, չէր ամչցած թող խողխողող, հալածող, արհաւիրող ժողովրդին զուարթ և ճանաչեցնել ինքզինքը հրապարակաւ, այն եւս այսպիսի զօրութեամբ րոպէի մը թէ և մեր է՝ եղկելի պերժուան, ո՛չ նոյն իսկ ուսանողը, կը շիկնի հայ անունը վրան անտելու . . .

Հանգանակութեան առաջին գումարը, իբրև հիմնադրար այս նպատակաւոր յանձնարարի ձեռնարկին, արուեստը Ռոչիլտի կողմէ, 10000 անգլ. ոսկի (250 000 ֆր.) և քանի մը ժամ վերջ գումարը հասած էր 40, 000 ոսկ. ուսուց, միմիայն մէկ քանի հրեաներու կողմէ ստորագրուած : Յաջորդ օրը Նիւ-Եորքի նշանաւոր ֆինանսիստ մը, պ. Շիֆ, հրեայ, կը հեռագրէ 60,000 տօլար իր կողմէ ու այսպէս հանգանակութիւնը կերթայ յատուկ . . .

Առջի օր, երբ Լօնտօնէն ստացած անգլիական թերթ մը կը կարդայի, տեսայ թէ ընդհանուր գումարը, մօտ 8 օրուան ընթացքին արդէն հասեր է 250 000 անգլիական ոսկիի, որ ֆրանքի հաշուով առասպելական թուանշանի կը հասնի : Նիւ-Եորքի ֆինանսիստը, Շիֆ, ինչպէս նաև Ռոչիլտ և ուրիշներ կրկին ու կրկին անգամ նուիրած են միեւնոյն չափով գումարներ, ու եթէ քանի մը շաբաթ եւս անցնի, գումարը պիտի հասնի անհաւատալի քանակութեան :

Այս պէտք է նկատել որ այս միմիայն մէկ յանձնարարութիւն է : Ղեկնակալն ուրիշ մի քանիներ ևս, որոնք թողորն ալ կաշխատին ու կը հաւաքեն կարօտեաններուն օգնութեան հասնելու համար, — Օտէսա, Քիլիմէնդ, Սարկով, Միլոկ, և այլն և այլն, վերջապէս ուր որ հրեայ թշուառութիւնը կը տիրապետէ այս պահուս, և այս պիտի կատարուի անգլիական և ամերիկեան հիւպատոսներու անմիջական հսկողութեան ներքեւ :

Այս օր կը գրենք, պիտի ըլլայ արդեօք դատ մը մեր քաղաքային ու պարտաւոր հարուստներուն, որոնց քանակը կը բազում միմիայն կեղծեցողներ շինելու, խաչեր գնելու և գեղ նման անքան ու աննպատակ ձեռնարկներու համար . . .

Մենք չը կրցանք, ցաւալի է ըսել, մանրամասնել հոս այն ողբերգական ու տխուր միթիւնները որ կատարուեցան Լօնտօնի արեւելեան տնկիւնը, որ գրեթէ Հրէաստան մըն է, եւ որ, հակառակ բարեխնակաւ խառնափնգորութեան կեղծողական մը լինելուն, ամբողջ 3-4 օր ո՛չ մէկ ժպիտ, ո՛չ մէկ զուարթ հայեացք կար տեսնեակ հազարով հրեաներու զէմքին վրայ, ու իրենց եղբայրակիցներուն սուգը յարգելու սէրը այն աստիճան էր յատուկացած, որ ամբողջ շաբաթով սուգ էին և ո՛չ մէկը թատրոնի կամ այլ զուարթութեան վայրի մը գրան կը մերձենար :

Իրաւ է թէ լացի, ողբի, հառաչանքի զործը մենք ամենէն լաւը կատարած ենք ու կարող ենք կատարել բայց գործնական, դրական հետեւեալքը . . . Հապա մեր անսիրտ ու անգութ հարուստներուն վարմունքը . . .

Ծիծաղելի պիտի ըլլար, անշուշտ, մեր կողմէն հայ հարուստները, հրեայ դրամատէրերու հետ բազմաութեան զնել, սակայն և այնպէս, գոնէ այս վերջիններուն ստուերը ունենալին մերթնները . . . Կը պակսին արդեօք մեր մէջ ալ միթիւնաւորներ, չը կ'անարդեօք այնպիսիներ՝ որ փոխան 10, 000 ոսկիի՝ նուրիսն 10, 000 ֆրանք . . . Թիւրքահայ քանակները պրկուեցան շահերու վնասման սարսփով ինչ կընեն հիմա ոռուսահայ միթիւնաւորները՝ որոնց աչքին առջեւ ամբողջ ժողովրդ մը, արիւնի և նախ ճիւղի արհաւիրքներէն յետոյ՝ զստապարտուած է բացարձակ թշուառութեան . . .

Ամօթ է մեզի, ամօթ է, և աններելի՝ ամօթ, եթէ երկար անտարբեր մնանք . . .

Մ. Յոլակ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՆԱԿԱՆ ԱՐԱՐԻՆ
ՀԵՂԵՆԱԿԱՆ ԱՐԱՐԻՆ

ԸՆԴՀ. ԴԱՏԱՍԻՍԱԿԱՆ ՃԱՌԸ

—) 0 (—

(ՍՄան զու մէկ-է-քք քաղաքում)

[Ընդհ. դատարանը նշմկատին պէյ հետեւեալ կերպով շարունակեց զատին վերլուծումը, որուն առաջին մասը նոյնութեամբ հրատարակուած էինք մեր երէկի թիւով]

Ինչպէս վերը ըսինք, Պուլկարիոյ Օսմ. քովաթիւնութեան տեղակալութիւն պահանջուած էր բողոքական զէպիսկոպոսի հետ կապ ունեցող պարագայներու առիթ, ուրկէ հասած հեռագրական պատասխանը կըսէ. — Սրբախնային Միքայէլեան անուն կող հայ մը և ուրիշ մը որուն ինքնութիւնը ի՛նչեւ չհասկցուեցաւ, սակայն վրայէն գրուած էտուար ժօրիս անունով պիւժիական անցաքի մը եւթադիւ կուտայ թէ, գիրազատ Նիւթր պատրաստող գործարանի մը ճարտար գէտն է, ասոնց երկուքը անցած մարտ ամսոյ առաջին շաբթուան Սօֆիայի մօտիկ Պալի Էֆէնի զիւղին մէջ պոմպայի փորձեր կատարած ատենին, անակնկալ պայթումի մը հետեւանքով, երկուքն ալ նոյն պահուն սպանուեցան : Պայթումի պահուն ասոնց քովը կը գտնուէին նաև Սօֆի Արաչօ եւ Նատէճտա Աթալեան անուն երկու կին, ինչպէս նաև պուլկար խողաբարական ընկերութեան անգամնիւն Նորկաճէֆ, Բա. նայթի Բայէֆ, Պօրիս Բաւի, Քիլէն Սատոֆ անուն աւագանները, ինչպէս նաև պուլկար յեղափոխական ընկերութեան պատկանող երկու աւագաններ ալ :

Օսմ. քովաթիւնութեան նոյն հեռագիրը կը ծանուցանէր նաև թէ այս խնդրոյն վերաբերեալ բացատրութիւններ և մանրամասնութիւններ պարունակող կարգ մը թղթակցու թիւներ կը գտնուին Բ. Դրան մօտ Հեռագիրին մէջ յիշուած թուղթերը անմիջապէս Բ. Դրանէն բեր.

ուեցան և մանրամասն քննութեան եւ ուսումնասիրութեան ենթարկուեցան : Ասոնց բովանդակութիւնը հետեւեալն է. — Պուլկարիոյ Օսմ. քովաթիւնութեան կատարած քննութիւնն ինչէն ու զրկած տեղեկագիրներէն կը յայտնուի որ այս Պալի գիւղին մէջ տեղի ունեցած պայթումին հետեւանքով սպաննուած Սրբախնային Միքայէլեան Պօլէն Սօֆիա եկած հայկական Դրօշակ ընկերութեան պետերէն էր : Իսկ Էտուար ժօրիս անցագիրը կրող եւ Սրբախնային ընկերացող անձն ալ Հայ ազգէն, եւ զարձակ Դրօշակ ընկերութեան անգամ էր : Ասոնց յուզարկաւորութիւնը եւ թաղուած կատարուած է ժողով գտնուող Դրօշակի կեղծուական վարչութեան անգամակից կարգ մը յեղափոխականներու եւ պուլկար խողաբարական ընկերութեան կողմէ երկու սպանուածներուն բնակարանին մէջ գտնուած են եօթը սնտուկ կարեւոր թուղթեր ու առաջակներ զորս փախցնելու համար ամեն միջոց գործադրած են հայ քովաթիւնները, Հետեւաբար անոնց արարքը եւ յեղեղական եպիսկոպոսի փորձերը ու ձեռնարկները պարզին մնացած են : Պալի գիւղին մէջ տեղի ունեցած պայթումն ատեն ներկայ գտնուող Սօֆի եւ Նատէճտա անունով տեղ մը փախած են :

Հարցաքննիչ մարիինք որ արդէն խնդրոյն իսկութեանը եւ անոր սկզբնաւորութեան եղանակին պատրաստութեան մասին կատարեալ հետախնդրութիւն եւ տեղեկութիւն ունէր, այս պաշտօնական թուղթերն ու թղթակցութիւններն ալ քննութեան մը եւ ուսումնասիրութեան մը ենթարկեց : Ժօրիսի նախնական հարցաքննութեան մէջ Սամուէլ Փայն անուն էկեր յիշատակուած էր որ բացայայտ էր թէ մեծ կարեւորութիւն մը ունէր : Վկայութեանց եւ քննութեանց նայելով Սամուէլ Փայն կող էր : Միւս կողմէ, Պուլկարիոյ մէջ, տի նստիթի փորձեր կատարած պահուն պատկանող հայ յեղափոխականներու պատկերէն Սրբախնային Միքայէլեան ալ կող էր : Հետեւաբար Սամուէլ Փայն եւ Սրբախնային Միքայէլեան միեւնոյն անձր պէտք էին ըլլալ Մանթիէ քաղաքի թէ Սամուէլ Փայն անցած Հոկտեմբերի մէջ հետացած էր Պօլսէն, միւս կողմէ Սօֆիայի քովաթիւնութիւնն ալ կը յայտնէր թէ կաղ Սրբախնային Պօլսէն դացած է Սօֆիա, ու շարունակած է իր պայթուցիկի փորձերը, Հետեւաբար այս երկու այնուները կրողը նոյն անձը, այսինքն Սամուէլ Փայն ծածկանուին սակ կաղ Սրբախնային Միքայէլեան էր, իսկ իրեն ընկերացող էտուար ժօրիս անցագրով ստորին անձն ալ որուն ինքնութիւնը ճշգրի կարելի չէր եղած հոն, եւ պայթումին հետեւանքով Սամուէլի հետ սպաննուած էր, այն ալ Պէլիօսի էտուար ժօրիս եղեղաբար ընկերներէն եւ Սրբախնային վաճառատան պայտօնեանէն Քիլեաթիան էր, որուն փախուստը զիւրացուցած էր ժօրիս, իր անցագիրը տարով անոր :

Ասոնք բացարձակապէս եւ յստակօրէն ճշտուած են : Այս վերջնական եւ ճշմարիտ արդիւնքէն բացայայտ կը տեսնուի թէ ժօրիս իր անցագիրները անձամբ Վաճառատան Քիլեաթիան տարով, յեղափոխական նպատակները զիւրացուցած, գործադրած եւ յիշեալը Պօլսէն փախցնել տուած

է : Քննիչ մարմինը, մէկիկ մէկիկ երեսան հանց ծածկեալ էր ճշմարտութիւնները եւ զանոնք պարզեց ժօրիսի սոյնե որ պիւժիական զեպանատան Բ. թարգման Մ. Մարքէթէլի ներկայութեան հետեւեալը խոստովանեցաւ . . .

ԺՈՒՒՍԻ ԽՈՍՏԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Ժօրիս Վաճառատան Քիլեաթիանի հետ մտերմական յարաբերութիւններ հաստատուելով սկսած էր քննել հայ յեղափոխականներու խողաբարական գաղափարները զորս մինչեւ այն ատեն չէր քննած : Այս գաղափարը տարածելու համար Քովաթիւններուն հրատարակած «Բերօ Արմէնիօ» եւ ուրիշ կարգ մը թերթերն ալ քննած, կարգացած եւ շարունակած էր կարգալ : Միւս կողմէ Վաճառատան Քիլեաթիանի հետ ալ այս խնդրին վրայ շատ մը բանակցութիւններ կարծիքներու փոխանակութիւններ եւ զգացումներ փոխանակելով հայ յեղափոխականներու նկատմամբ կարգ մը զգացումներ ենթարկուած էր ինք սկզբունքով անիշխանական եւ բնութեամբ խողաբար ըլլալով, իր մասնաւոր զգացումներուն եւ գաղափարներուն՝ անոնց մտադրութիւններուն ու խողաբարական ծրագրերուն համաձայն եւ նման ըլլալը պարմանալի բան մը չէր . . .

(Շարունակելի)

ՈՂԵՏԱԿԱՆ ԹՐԵՐ

Մթին ամպ մը կը սաւառնի ամբողջ Եւրոպայի վրայ, տարածելով իր ստուերը Բեթլեհայուրէն մինչ Նիւպոնա : Գրեթէ ամեն երկրի ժողովրդոց մէջ ջանք մը կայ աւելի լայն ապաստութիւններ ձեռք բերելու : Դէպքերը ցոյց կուտան թէ մինչեւ իսկ այն տէրութիւնները որոնք արդէն սահմանագրութեամբ մը օժտուած են, 1848 թուականի օրերու վերաբացմանը կրպասան :

Ռուսիոյ մէջ սահմանագրական յուզումը մինչեւ անիշխանութեան հասած է. Յարին կայսրութիւնը զօրք մը եղած է այսօր : գործաւորները կը հետին գիւղացիները ապստամբած և զինուորները կարմիր գրօշակ պարզած կռիւ կը մղեն մէկ-մէկու դէմ, քանդելով այսպէս երկրին ամբողջ ելեւմտական վիճակը :

Մեծ կայսրութիւնը բառին բովանդակ նշանակութեամբ մեկուսացած է Եւրոպայէն, թղթատարական ու հեռագրական պայտօնեաներու գործադրութիւն պատճառաւ Վերին իշխանութիւնը արկու հակառակ կուսակցութեանց ձեռքն է մնացած : Մին աղատական ձեռն տակ վիթխան ձեռքը, իսկ միւսը յետագրիական պալատականներու ձեռքը, որով աւելի մեծ շարիքներու անգիր կուտան քան ինքնակամ տիկտաթորութիւն մը : Ռուսիա իր կառավարիչներուն գործած

դարձուր սխալները սկսած է քննել: Ահա որ փրկանք, որ դեռ չատ մը արեւան հեղեղներ թափել պիտի տայ:

Ինչուի մէջ կատարուած այն դէպքերը ամբողջ կեդրոնական եւրոպայի մէջ իրենց արձա գանք սկսած ունենալ:

Աստիճայ մէջ, կառավարութիւնը պատրաստակամութիւն կոյց կուտայ ժողովուրդին պահանջները գոհացնելու: ամենքն ալ, մինչեւ իսկ անուանները, իրաւունք պիտի ունենան հաւասարակէս քիչարկութեան մասնակցելու:

Հունգարիոյ մէջ ազնուապետականութիւնը կը հակառակ ընդհանուրին քիչարկութեան սկզբունքին: Խառնուած սպառնական ցոյցեր կընէ փողոցներուն մէջ, սպառնալուքներու գործաւորները կը մերժեն սպառնել այն լրագրիները որոնք ընտրական ընտրութիւն թշնամի կը հանդիսանան և դեռ մի քանի օր առաջ այդ լրագրիներուն խմբագրատները քարկոծուեցան:

Պրահայի մէջ ալ տարածուած է ընդհանուրին քիչարկութեան մասնակցելու իրաւունքի խնդիրը, թէեւ հոն քիչարկութեան քննարկումը:

Սակայն ինչ մէջ, քիչարկութեան քննարկումը լինելու, բայց քանի մը տարիներ ի վեր պահպանողական հողատէրերու պահանջներն վրայ օրէնքը դատընցելու: Եւ ահա ընկերակարականները ծրէգտի մէջ հսկայ ցոյց մը կազմակերպեցին արքայական պալատին առաջ քարերով ապակիները կոտորելով:

Ընտրական բարենորոգումը օրուան խնդիր է նաև Բրուսիոյ

մէջ: Քաթալոնիա սկսած է ներքին ինքնապետութեան պատճառով Սպանիոյ: Քաթալոնացիք տանի շը տարիներէ ի վեր մայր հայրենիքէն բաժնուելու միտումներ սկսած են ցոյց տալ: Արուստագէտ յոսանքով Քաթալոնիան այլեւս չուզեր ազգային իտալացի Սպանիոյ կաթնտու կողմը ըլլալ:

Նոսթրաբարական տագնապ նաև Անգլիոյ մէջ, Սըր Բէմպէլ, Պէնէրմէն անչուած է թագաւորէն նոր դահլիճ մը կազմելու: Դրժբազար, ազատականները շատ գէշ պայմաններով կը ներկայանան երկիրը կառավարելու պատասխանատուութիւնը ստանձնելու համար: Համբուրի խոշոր խնդիրը կայ լուծուելիք: Սըր Բէմպէլ, ինչպէս նաև Լորտ Ռոզպրի, երկուքն ալ ազատականներու վարիչներ, հակառակ են իրարու: Բայ աստի Չէմպլընի մաքապայտութեան խնդիրը կրկին երեւան պիտի գայ խորհրդարանին մէջ: Եւ խորհրդարանականութեան բարտր կախուած է հետեւաբար անգլիացի ժողովուրդի տալիք հաւանութեան:

Պրահայի ժողովուրդը մէկ միլիոն ֆրանքի կորուստ մը ունեցաւ ուսական արժէքով: Բրուսիոյ գիներու անկման պատճառաւ, և թիէ այդպէս շարունակուի յառաջիկային անպատճառ փոփոխութիւն մը յառաջ պիտի գայ նորանսայի արտաքին քաղաքականութեան մէջ:

Ամբողջ եւրոպայ ստուգապէս եռուզեւի մէջ է: Հին աշխարհը քիչ անգամ այսպիսի քրիթիկ վիճակի մը ենթարկուած էր:

Էնտերնացիոնալ Ռուսիոյ

ՇԼԻԽՆԵՂՈՒՐԿԻ
ՐԱՆՏՐԱԿԱՆԱՆՆԵՐԸ

Շիւսէլպուրկի բերդը Ռուսական Պատերազմէն օր վերջերս սկսաւ բանալ իր գոները: «Ժողովուրդան կամքին» նախկին ախոյեանները ազատ արձակուեցան, այդ զարհուրելի արգիլարանին մէջ քսանէ աւելի տարիներ անցնելէ ետքը—իրենց ամբողջ կեանքը գրեթէ — առանց գէթ անգամ մը իրենց ազգականներէն կամ մերձակներէն մէկը սեսած ըլլալու: Ամէնքն ալ այն ատեն երիտասարդներ էին ու հիմայ ծերացած են: Արդէն կենդանի մնացողներուն թիւը խիստ քիչ է: չափերը իրենց բանտարկութեան առաջին տարիներուն իսկ ինկան:

1884ին էր որ Շիւսէլպուրկի բերդը քաղաքական բանտի վերածուեցաւ: Տարեկան 75 Օժր. կը նստին ան ուս պետական գանձին: ոստիկաններու մասնաւոր խումբ մը կայ անոր պահպանութեան յատկացուած: Կրկին ամսավարով, Առաջին տարիներուն մէջ բանտարկեալներուն ենթարկուած ուժեղ մը անկարելի է ներկայագրել, կատարելապէս մեկուսացած էին անոնք: արգիլուած էր իրարու հետ տեսակցել, երգել, սուրբ եւ նոյն իսկ շատ արագ քուլի իրենց խցիկներուն մէջ: Հիւանդներու համար դարմանատուն չիկար, խցիկներուն մէջ կը մեռնէին առանց կարենալու իրենց ընտանիքէն գոնէ մէկը սեսնել մեռնելէ առաջ: Երբ շատ մը ոստիկաններու խցիկ մը մտնելու եւ յետոյ բեռ մը տանողի պէս ծանր քայլերով դուրս ելլելու լսէին, կը հասկնային թէ իրենցմէ մէկը մեռած էր եւ զիտկը կը տանէին: Եստեր չէին կրցած տոկալ այս ընտրութիւն եւ խենդեցած էին միշտ նոյն խցիկին մէջ ձգուելով: Անոնց աղաղակներէն ու կանչումներէն քերէն միւսները կը հասկնային խեղճերուն վիճակը որ ամէն վայրկեան իրենց ալ կը սպասուար:

1884ին մինչեւ տոյսօր 67 հոգի այս որջերուն մէջ ձգուած են: Ասոնցմէ 13ը կախուած են, որոնց

մէջ են Պայմաշէֆ, Քալաշէֆ, Կերչովիչ, Վասիլիւժ. երեքը անձնասպան եղած են, մէկը բանտին կանթեղին իւղը իր վրայ թափելով, միւսը Սօֆիա, իր երակները կտրելով: Տասըվեց բանտարկեալ տառապանքէն մեռած են, ոմանք խենթեալէ ետքը: Շղէտրին եւ Գոնաշէվիչ երկար տարիներէ ի վեր խենդեցած են եւ հիմայ կազանի յիմարանոցը կը գտնուին: Եստ մը բանտարկեալներ ալ վրջին տարիներս ազատ ձգուած են, սակայն ոչ ամբողջովին, քանի որ ոմանք Սիպերիա եւ ոմանք Սիպերիայի զրկուած են: Ազատուածներէն երեքը այլեւս ապրիլը աւելորդ համարելով անձնասպան եղան երեքն ազատուածն քիչ վերջը:

Վերջին տարիներու մէջ այս ընտրութիւնը քիչ մը մեղմացաւ: սկսան թոյլ տալ կարգալու, զոյգ զոյգ շրջագայելու, բերդին արհեստանոցներուն մէջ աշխատելու: Եւ սակայն բերդը ասոնցմով չի կորսնցուց իր պժգալիութիւնը: Ինչ շատ մօտ ատեններս անձանթ մը բերուեցաւ այս խցիկներէն մէկուն մէջ ու երբէք կարելի չեղաւ լուր առնել խեղճին վրայ...:

Այժմ ինչ կենդանի մնացած մարտիրոսներ ազատ ձգուած են: Երեքը 20 տարի է որ հոն բանտարկուած էին, մնացածներ 20 տարիէ ի վեր: Ամէնքն ալ ծերացած, վտիտ, վատոյժ, հիւանդ կոտ, զանազան ջղային հիւանդութիւններով վարակուած:

Ու թէեւ ազատ ձգուած են, բայց ոստիկանները, լրտեսները անոնց օձիքը չեն ձգեր: Քանի մը ամիսներ առաջ եղած բազմաթիւ դիմումներու վրայ համարաւոր կին յեղափոխական Վերա Միկիների թոյլտուութիւն եղաւ երթալ գիւղը: Իր մէկ ազգականին տան մէջ ապրելու: Անիկա 20 տարիէ ի վեր Շիւսէլպուրկ կը զըտնուէր: ոստիկանները դեռ անոր օձիքը չեն ձգած սակայն, նոյն տան մէջ, քովի սենեակը կը կենան եւ ելք այցելու մը գայ, միասին սենեակ կը մտնեն որպէս զի խօսակցութեան ներկայ ըլլան: Գիւղացիներուն արգիլուած է անոր տունը եր-

Գ Ր Ի Ց
ՕԳՏԱՎ ՍԻՒՊՕ
ՀԱՅՐ ԲԱՆՖԻԼ

(Քարգմանուած ֆրանսերենէ)
—Կը տեսնենք, չուն մը քեզի նախ եւ առաջ ոնենակին խորը գնալէն: չորս ութի վրայ, չպն մը պէս, ազտոտ գոնջը սա պատուաւ զիս դարձուցած: Եւ քպասէ:
Միւսը կը ըսէ որք սխալութիւն կը հնարաւոր էր: Պարթեօն ուղղութեամբ պատուհանը սենեակին ամբողջ երկայնութիւնը իր զոհին եւ իր մէջ լսեց ձգուող: Գրասենի բուն մը ու կի հանելով քարաւ տախտակամանի վրայ, տարատը վար ձգեց, ծնրադրեց, չապիկը ամփոփեց, գարշելի ժէսթով մը:
—Իրաւ կը գնեմ որ չը պիտի գաս, վատ, պոռաց:
Հայր Բանֆիլ ամգունած էր: Վիզը ձգտուած, կոնակը լարուած, աչքերը շմորած, ցուցադրուած այդ

անարգող միսին առջեւ կանգ առած, կը վարանէր: Սակայն ձայնով մը որ կը դողդար, ձայնով մը ուրկէ կանցնէր հեկեկանքի մը հեծիւնը, պատասխանեց:
—Իրաւ կը գնեմ որ պիտի առնեմ: Այն ատեն, Լը պըրթոն էեզնօրէն ծիծաղեցաւ, քսան ֆրանքնոց ոսկի մը առաւ ողնայարին վերջաւորութեանը մէջ զետեղեց:
—Եկուր տեսնեմ հիմայ, ըսաւ, բայց զիտցած ըլլաս որ ոչ թէ ձեռքերովդ... այլ ակոսաներովդ պիտի առնես:
Հայր Բանֆիլ երեքաց, ամբողջ մարմինը կը սարսուար, տկարութիւն մը կը կրկնէր ծուռկերը եւ բազուկները կը թուլցնէր: Դանդաղորէն կը յառաջանար, արջի մը ստատանուած ներով:
—Եւստ եկուր մոլտաց Լը Պըրթոն, որուն համբերութիւնը կը հատնէր Գարբուսի պիտի ըլլամ:
Հայր Բանֆիլ երկու անգամ եկաւ եւ երկու անգամուն ալ ոտքի եկաւ: վերջապէս վերջին ճիգի մը մէջ արիացաւ եւ սկոսայի հարուածով մը իւրեց զըամը:
—Ազտոտ սինլըր, ոռնաց Լը

Պըրթոն, երբ իրեն դառնալով տեսաւ որ ոսկին կը փայլէր արեգային շրթունքներուն վրայ... Է՛հ ազէկ... ամենքն ալ այս ձեռով տոնելու ես, կամ ես կը յարթուիմ եւ կամ զոռն... Տեղը անցրի:
Հայր Բանֆիլ տասն անգամ ենթարկուեցաւ այս այլանդակ չարչարանքին: Նախկին մտազորոն էր որ, առաջին անգամ վերջ դրաւ այդ բանին: Ելաւ կայնեցաւ, դէմքը կասկարմիր մրմուտով—Ալ կը բաւէ... բայց բոլոր ունեցածս պիտի չորթէ այս լղրճուկ պապուկը:
Տասը շատ աղուար ոսկիներ կորան ցնելէն զգացած թարկութեանը հակառակ, չը կրցաւ զսպել իր զմայանքը եւ կրօնաւորին փորին թափելով:
—Դուն ծիցիբես սինլըր մըն ես, եղբակացուց: Ինչ եւ իցէ եկուր դաւաթ մը պարպենք:
Հայր Բանֆիլ մերժեց մեղմ ժեսթով մը: բարեւեց եւ դուրս ելաւ:
Ինչուէթր մը անդին, ճամբուն վրայ, խաչելութիւն մը կար, ծնրադրեց եւ ջերմեանդօրէն աղօթեց: Յետոյ շարունակեց իր ճամբան: աչքերը երկինք սեւեռած, արքշիտ աչքերը, որոնք կարծես ամպերուն

մէջէն կը հետապնդէին ծիծաղուն եւ շողողուն պատկեր մը: Եւ հաւատքով ամրացած ձայնով մը ըսաւ:
—Պիտի չինեմ ստուռը:
Իր պոռոյտները լինցնելուն վանք կը դառնար, ուր միշտ նորանոր վընասներ ստուգելու կը հարկադրուէր: Իր բացակայութեան միջոցին, տանիք մը աւելի կը քած էր, նորանոր ճաթատուքներ, խոշոր որմաններուն վրայ, ծառերու այլանդակ ձեւերով կը զծագրուէին: տախտակամաններուն գերանները կը ծոկէին: Եւ մորենիները, եւ եղիճները ու սէզերը՝ բակերուն մէջ սեղմուած՝ թաւուտքի ցցուածքով մը կը ծածկէին: բացուածքները եւ զուռները կը գոցէին: Հովը որ կը քչէ կը տանի մոլորած սերմերը, կը բեղմնաւորէր վայրերը, արգաւանդ բուսականութիւն մը դուրս կը պոռթկար պատերէն: կը խոռուանար խօլ փունջերով, լայնցընելով ճեղքուածները որոնք կը ճարճատէին աւելին բուռն մղուածն ներքեւ:
(Շարունակելի)

Թալ Կերթերս հիւանդութեան պատրուակով ուղեց արտասահման ելլել, բայց կառավարութիւնը թոյլ չի տուաւ:

Սակայն այս արձակուան ալ քայլ մըն է դէպի առաջ, պէտք է հիմա մտածել անոնց վրայ որոնք դեռ հոն կը մնան: Անոնք որ այս միջոցին քիչ մը ազատութիւն կը վայելեն Ռուսիոյ մէջ, պէտք է յիշեն իրենց երախտագիտական պարտքը մանաւանդ անոր հանդէպ որ Ռուսիան չաբաշտէ Բէլգիէն ազատեց, այսինքն Սազանօֆը, Պետք է որ ամէն ուժով բացուին Շիւրէլպուրկի գոնեակը իր վերջին ցոնորուն առջեւ, նորագործ սերնդեան հինգ երիտասարդ բան տարկեալներուն առջեւ:

(Քուրիէ Էօրօթէն)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուկարական հեռագրական գործակատարութեան հեռագրի մը համաձայն, խրկուած Պօլսէն, դեսպանատանց հեռագրական փոխանակումը իրենց կառավարութիւններու հետ վերջացան, որով, երէկ Աւստրո Հունգարական դեսպանը պարոն Գալիչէ, Բարձ. Գրան տուած վերջին նօթան, զոր Մակեդոնիոյ Փինան սական քօնթրօլի ծրագրին բնագիրը կը վերահաստատէ, Բընագրի մէջ եղած փոփոխութիւնները աննշան են:

Քօնթրօլի հայցը վերջացած կը նկատուի Տէրութիւնները կը ստանան կատարեալ գոհացում:

Մարշալ Յոստ փաշան որ մահուան դատապարտուած էր մէխիմ փաշայի տուած տեղեկագրին համաձայն, որպէս զաւագորդ Ուլթանի դէմ, որ ետքէն մահուան պատիժը փոխանակուեց աքսորի ի Շամ, իւր զինուորական աստիճանէն զրկելով: Հիմայ ներում եղած է իրեն, պիտի վերագործուին բոլոր աստիճանները, և նախկին գիրքը:

Գաղտնի քաղաքական ուստիկանութեան պետ, Յէլիմ փաշան ձերբակալուած է, և իւսկիւտար ուղարկուած: Ասոր պատճառը կը կարծուի թէ՛ Յէլիմ փաշան տմարդի վարմունք ունեցած է արքունիքի իշխանուհիի մը հանդէպ, որպէս թէ Սէլամըրի օր մը, հրամայած ըլլայ անոր կառապանին կենալ... մի քիչ մէկուսի:

Այսու կը հաւաստուի թէ՛ աւելի լուրջ պատճառներ կան անոր դիմակաւորուած բանտարկումի համար, ընդ որս ինքն իւր զէմ հիւսած մահուան փորձը:

Պօլսոյ բնակչութիւնը մի քիչ շունչ առած է, բայց ցաւօք, այս երկար չի տեսեր:

Պօլիս 28 նոյ.— Բարձրագոյն Իուռը կը պնդէ զօրքերու ծախսերը հայթայթուիլը Մակե-

դոնական նահանգները, ծրագրի մըս յողուածները կընդունի ամբողջութեամբ:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բարիկ 27 նոյ.— Ժուրնալ իր քաղիքը կը հաստատէ այն լուրը՝ թէ կոմս Վիթէ տալու է հրաժարականը: Այս պարագայիս Իկ նախկին կոմսը նշանակուելու է միահեծան իշխանապետ:

Պէրլին 27 նոյ.— Բեթերպուրկի շրջակայքը գտնուող գիւղացիները ապստամբած են, յարձակելով աւարի են տուած:

Բեթերպուրկ 29 նոյ.— Միութեանց Բարձրագոյն դիւանի կեդրոնական գործատեղին աւերուեցաւ: Երէկ ոստիկանութեան կողմանէ, Բեթերպուրկի երկաթուղու գործաւորներու դիւանը լուր է տուած վարչապալի գործաւորներու դիւանին թէ՛ Գրուոյ դոլէվի ձերբակալման պատճառով, Մոսկուայի արդի համաժողովը նախնականաբար պիտի որոշէ ընդհանուր գործադուլ: Բեթերպուրկի դրութիւնը փոխուած չէ: Բիկա քաղաքը կղզիացած է բոլորովին:

Լօւտրա 29 նոյ.— Բեթերպուրկէն Պիլաճաքի կիմացնէն թէ Մոսկուայի մէջ երկու քօզակի գունդեր, հրաման ուզած են վերագառնալ իրենց տները, անցիկական հակաթորփիլսնաւոր «Միլլանտէր» երէկ խորոխեց Բեթերպուրկի նիքօլաէվաքի կամուրջին մօտ:

Բեթերպուրկի մէջ քօստայի և հեռագրատան պաշտօնեաներու կողմանէ «սարքուած» միթիւնկին առթիւ արիւնահեղ ընդհարում մը տեղի ունեցաւ ձիւտոր ոտի կաններու և ժողովրդին միջև: Կողակները ժողովուրդը ցրուելու համար սկսեցին խարաղաններ գործածել և ժողովուրդն ուլ վեցհարուածեաններով կը պատասխանէր: Կողակները այնչափ կատաղած էին որ բան մ'ալ չէր երեւէ իրենց աչքին, մինչեւ իսկ անխնայ կը դարնէին ոստիկանները՝ որոնք այդ հարուածներու աակ յուսահատեցուցին և զաղակներ կարձակէին և անոնք ալ իրենց կարգին անխնայ կը հարուածէին մարդիկն ը և կը նիկները:

Քաղաքին ահէն փողոցները լեցուած են կողակներով, իրենց հրացանները դէպի ժողովուրդին ուղղած: Երկաթուղիներու կայարանները կը պահեն զինուորներու շոկատներ: Պահակներ կը պատին փողոցներու մէջ:

Անգործ բանուորները խմբովին կը թողուն Բեթերպուրկ, և Ռուս կուսակալութեան ազատելու համար կը քաշուին իրենց գիւղերը:

Գ. Եթէ ամէն օր եօթ հարիւր հոգի կը մեկնին արտասահման, նաեւ մը խանութներ աւարի տրուած են թափառաշրջիկներէ:

Ռոստի և հեռագրատան պաշտօնեաներու գործադուլը կը շարունակուի, մինչեւ իսկ թէ լեֆօնովեցած յարաբերութեանց խզումը կ'ապաստի Մոսկուայի հետ թեթեւութեամբ ըլլալուն պատճառաւ: Հասարակութիւնը շարժական զայրուցած է Վիթէի դէմ որ Տուրնոֆօ Նման նախարարի մը յետագէտ գաղափարներուն այժ տալով մինչեւ հիմայ չէ կրցած գործադուլը դադարեցնել: Ամերիկեան կառավարութիւնը Ռուսիոյ մէջ գտնուող իւր հպատակներ, ու պաշտպանութեան համար Մինիաբօլիս յաճանաւր պիտի զրկէ ուսական ջուրերը:

Նախկին պատերազմական նախարար զօրպետ Սախարօֆ որ Սարաթօքի կառավարչէցած ժամանակ այնքն հանրածանօթ անուն մը հանեց գործած վայրագութիւններով, յեղափոխական կոմիտէի կողմանէ մահուան դատապարտուած ըլլալով, վճիռը գործադրեց կին մը վեցհարուածեանի երեք հարուածով վայրկենապէս սպաննելով զայն:

Պէրլինէր Թակէպաթթի թերթը Օտէսայէն կիմանայ, թէ վերջին օրերու մէջ հոն աւարի են տրուած 8500 հրէայ ընտանիք, 300 այր և կին սպաննուած և 2278 հոգի վիրաւորուած:

Բեթերպուրկէն կիմացնեն թէ Սարային մէջ գտնուած քօրագունտը ապստամբած է 10000 զինուորներ, յարձակուած են քաղաքի վրայ աւարած և կրակի տուած են բոլոր շինական վաճառատները:

Իււադրութեան մը հետքերը գտնուած են, որոնք նպատակն է եղեր քապստմբեցնել ամբողջ Մանչուրիոյ բանակը:

Մանչուրիոյ զինուորները խոստացած են յեղափոխականներուն թէ՛ Ռուսիա վերագառնալուն պէս միանալու են յեղափոխականներուն:

Բեթերպուրկէն կիմացնեն թէ, Եղիսարեթապոլիսը կրակներու մէջ է, խուժանր աւարի կուտայ խանութները: Հետեւակ զօրաց գունդ մը Բիշնեվէն ճամբայ ելած է խաղաղութիւնը վերահաստատելու համար:

Նամակաբեր աղանի մը, որ Սեվաստաբօլէն հասած է հոս նամակ մը բերած է քաղաքին հրամանատարէն, որով նա կիմացնէ թէ՛ պաշարուած է ապստամբ զինուորներէ, չի կրնար իր բնակարանէն դուրս ելնել:

ԱՄԵՐԻԿԱ

Վաշինկթօն 29 նոյ.— Գաղախան մերժեց ետ առնել իր բո-

ղոքագիրը, ուղղուած Գաղախանի գաղախական դիւսպանի հանդէպ ունեցած վարմունքի մասին:

ԱՆԳԼԻԱ

Վիէննա 29 նոյ.— Նայել Փրայէ Բրէտը լուր կը ստանայ Լօւտրայէն, որպէս թէ դիւանին ներկայ առաջին գործը պիտի ըլլայ բարոքել յարաբերութիւնները գերմանական կառավարութեան հետ:

Բարիկ 27 նոյ.— Անգլիական նոր դիւանը կազմուած է հետեւեալ կերպով. Աւագ լորտ գանձատան և նախարարապետ Սրբ Գամպել—Պաւէրման, լորտ դիւանագ պիր—Ռօպէրթ Լէյդ, լորտ դիւան սոպիր գանձատան—Ասքիթ, արտաքին գործոց—Էտուարտ Կլէյ—դապրակաւութեանց—Էլիին, Հնդկաստանի—ձօն Մօրչէյ, ներքին գործոց Հէրպարդ Կլաւսթօն, պատերազմի Հալտըն, Խորհուրդի նախագահ—Սարլ օֆ Գրով:

Հ Ր Ա Ի Ե Ր

Հայկական ընթերցարանի վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ ամէն անոնց որոնք իրենց նիւթական աջակցութիւնները ցարդ չեն խնայած, եւ որուն շնորհիւ ընթերցարանս այժմ կը գտնուի նախանձելի վիճակի մը մէջ:

Սակայն վարչութիւնս թէ թանգարանին ճոխացման և և թէ ընթերցարանի յառաջիկայի թեան աւելի յաջող քայլեր առնելու փափաքով ծրագրած է՝ յառաջիկայ նոր տարին սկսեալ աւելի ընդարձակ վայր մը ընտրել եւ հոն իգական սեռի յարուկ բաժանում մը աւելցնել:

Ուստի վարչութիւնս իւր այս փափաքը յաջողութեամբ պատկեր համար, որոշած է սարքել ընտանեկան շքեղ Պ. Ս. Ա. Հ. Ա. Ն. Դ. Ս. մը որ պիտի կատարուի յառաջիկայ դեկտ. 5 ին, երկուշաբթի գիշեր, ժամը 9-ին, ի սրահ «Պուլկարիա» ուր միւր յարգելի ազգայինք թէ՛ զուարճալի ժամանց մը պիտի վայելեն եւ թէ՛ միւս կողմանէ նպատակ պիտի ըլլան Ընթերցարանիս, որուն կարեւորութիւնը եւ օգուտները ծանօթ են ամէն հայու:

Լիայոյս եմք թէ՛ ամէն ազգային անհատ առանց ընկրկելու պիտի փութայ քաջալերել զմեզ:

Այս առթիւ կանխաւ կը յայտնենք մեր խորին շնորհակալիքը:

Տոճակները այսօրու չէ սկսեալ կը ծախուին «Հայկական» ընթերցարանը, իսկ հանդէսի երեկոյին ի սրահ «Պուլկարիա»:

Վարչութիւն «Հայկական» Ընթերցարանի (Կնիք)